ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ Սեպտեմբերի 17-ին. Թիֆլիս. №38.

ՄԱՐՈԿԿԵԱՆ ՀԱՐՑ

Лит. С. Быхова

—Ֆրանս բարեկամ, Մարոկկոյի գլուխը, սիրտը, փորը դու ես զաւթել—ինձ էլ «ոտները» բաւական է։
—Չէ, չեմ թողնիլ, Գերման, բոլորը իմս է։

ეროვნული ბიბლიოთეკა

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 Թ.

VI տարի

ԽԱԹԱԲԱԼԱ

VI տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլփիչ, անկեղծ և կեղծաւոր գործիչ-կործիչների և խայտառակիչների։

Անհրաժեշտ գիրք բոլոր ընտանիքների համար

ԽԱԹԱԲԱԼԱՆ » շատերին ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի։ Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆներդ ուզի։

Հասցէն՝ Тифлисъ Музейный пер., редакція „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»

Խմբագիր-հրատարակիչ՝ Աստ. Երիցեան

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ»

Բ Ա Ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Տարեկան	5 ր.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

Մեր թերթի բաժանորդներին «Սուրհանդակ» ամենօրեայ թերթը ուղարկում ենք պակաս վճարով։

100 տարով բաժանորդագրուել ցանկացողին 75 % զեղչ։

Ձրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիվայր։

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ՕՐԱՑՈՅՑԸ

1911 ՍԵՊՏԵՄԲԵՐ 30 օր

17

Суббота ՇԱԲԱԹ შაბათი

Լուսնի 5

18 (Կիրակի) Տօն անաշխատ աշխատաւորաց և անգործ գործաւորաց։

19 (բ. շ.) Յիշատակ սրբոյն Վրթանէսի Փափազեան, որ ի մէջ վերջին գրքի իւրոյ ասել է այն՝ ինչ որ զգացել է և ոչ մի տեղից բան չի հանիլ. ինչպէս այդ գիտէր ինքն գիտե և զտէր ցոցիալ Բաշխի Իշխանեան։

20 (գ. շ.) Տօն ամենայն ռոճիկաւորաց և ամսէ ամիս տոնլուղ ստացողաց, որք այսօր ստանան և վաղ ի մէջ ջիբից իւրեանց զմուկսն խաղացնին։

21 (դ. շ.) Պահք. բայց ով կամի կարէ և զպաս ուտիցէ։

22 (ե. շ.) Զայսօր յիշատակէ աշխարհաշինութեան. և Նոյի Նահապետի տապանէ դուս գալութեան։

23 (ուրբաթ) Տօն սրբոյն Մարկի քաջամարտիկ զինուորի կուսակցութեան «Խաթաբալայի»։

Տոմարագէտ և օրացուցապետ

Աղբոսխոս արք-վարդապետ.

ԻՄ ԳԸՐԳԸՐԸ, ԻՄ ՑԸՒԸՐԸ

IV

Երկու հարիր թուման տարխուն, իրիք հարիր թուման կանաչի, հինգ հարիր թուման քորփա խիար, հարիր թուման ծիծմատ, հարիր օխտանասուն ու հինգ թուման ու տաս շահի քոնդար, իրիք քսան ու տաս թուման քինձի ան համիմ, չուրս քսան ու օխտը թուման մաղդանոզ, օխտը հարիր վից թուման իրիք մանէթ տասչուրս շահի ու էրկու գրօշ էլ պամիդոր, հինգ հարիր թուման թազա կարտոֆիլ, հարիր տասնութ թուման բադրիջան, ութ հարիր թուման ծաղիկներ – հինգ հարիր թուման կարմիր ծիծակ, հարիր թուման սմարոդին, հարիր քսան թուման կրուընիկ...

Էս ինչի իմ հաշւում, ափրօ լաւ չէ՞ էսինց հաշւիմ.—հարիր թուման ու հարիր թուման—կանէ էրկու հարիր թուման, էրկու հարիր ու էրկու հարիր չուրս հարիր, չուրս հարիր ու էնդի էլ էրկու հարիր—վեց հարիր, մի հարիր էլ էնդի՝ օխտը հարիր. օխտը ու օխտր տասնուչուրս. տասնուչուրս ու տասնուչուրս՝ քսան ութ էնդի էլի օխտը հարիր... էս գիդիք թէ համա փող կուբանէ՞։

Բա չէ ո՞ւ հաուց ասկի խմբագրութիւնները կանան բան ունի։

Ա՜յ դուք էլ տեհնում իք, վուր խեբով բան է. չէ՞. իս էլ իմ տեհնում։

Հուզուրումը էտ փուղը.—մաշ՝ բերնի համը –բերնի համը վուչինչ. եանվրին վուր թազաթաղա խիար ուտիս, թէբերվլին պամիդորով չախոխբիլի, մինձ պասին—վուր խորոված բադրիջան ունենաս, արքայութին էլ ի՞նչ կօնիս գնալ--վիկաց ու քիզ համա էս քաղքումը ապրի էլի՞. փառք Աստծու վայնոբի պոլոժէնիէն էլ խոմ վիկալան. հիմի գնայ ու գեներալ գուբերնատորը իրէնը պարծենայ։

Իս իրին ասում էի՝

Աշխարքիս վրէն, ասում էի, ամեն բան կուլի, ասում էի, համա ասում էի, էն չի ըլի, ասում էի, վուր գուն ինձմէն շատ ապրիս էս քաղքումը ասում էի։

Մա՜շ.

Էս մէկ. բազի վուխտ էն էլ էի ասում։

Ի՞նչ էի ասում։

Հա միտս ընգաւ, մարթ վուր էտ թաւուր խորագ ունենայ էլ մեռնիլ ի՞նչ կօնէ, թող ինչքա՞ն քէֆը ուզէ ապրէ ու ապրէ։

Ապրեցէք էլի, էլ ինչի էք մեռնում։

Համա էս Վէրի կողմերում շատ ապրելը չաժէ։

Սուփ Սարքսի թաղը, Դամօժնի քուչէն, Օրթաճալէն ա՜յ, ա՜յ էնէ արքայութինի տիղը, վուր ողորմած Աս-

տուձը ստեղծիլ է ու Աթամին իր կընգայ՝ Էլի հիա բախշիլ է։

Հիմի էտ բաղդի արժանացիլ է ու, Աստուձ իրեն հալալ անէ, մէ կռօ՝ կաղզանցի Վարոս Ղազանջեանցովը։

Ինչ վուր հալալ է՝ հալալ է, ախպէր։

Քոի ափին, բերթի ներքևը, հեստի մէ բան՝ է մոդոնի, հեստի առուտրական է դառի, վուր միր քաղքի պերվի գիլդի կուպցէքը, գլուխը քարովն ին տի։

Գիլդնի էրեսին ակոշկէք է շինի, տակը ծաղիկներ.

—Կոմբոստոս, պամիդոր, խիար, ծնէփակ, տարխուն, բադրիջան իմ ցանում, կօսէ։

Մաշ։

Հիշա բան չէ՞. համա հայու խիլքումը էտ բանը խում չի մանում։ Հային փախչում է ան ըէդախտուր է դառնում, ան ցոցիալ, ան տիրացու ան թէ չէ վարժապիտ։

—Ի՞նչի է։

—Դադումն էլ լաւ է, կօսէ, ֆուրգոններով կանաչի ին դուս տանում ու մէշոկներով օսկի ու պողոսկէքով էլ մարքրիտներ ին յիտ բերում, կօսէ։

—Մէշոկներով օսկի՞, ասի, էտ վուրդի է՞։

—Ա՜յ ածած է, էն ծառի տակը, կօսէ։

—Ի՞ս օսկիք չիմ տեսնում. ասի։

—Վա՜ հէր օխնած. վո՞ւնց չիս տեսնում—էտ գօրա գօրա կանդնածները ինչ է մաշ, կօսէ։

—Էտ խում փէյն է, ասի։

—Հէնց օսկին էլ փէյն է, կօսէ։

Օսկին փէյն. աբա ո՞ւմն ասիք, վուր չարմնայ, ամա իս չիմ արմնում—իս հիմի էկիլ իմ էն փիքրի, վուր ուփրօ լաւ է մարթը մէ երկու հարիր ֆուրգոն փէյն ունենայ, քանց թու հիմիկուայ գլուխ։

Գլխումը ի՞նչ կայ ածած. վունչինչ։

Շատ մարթու գլուխը հեստի դադարկ է, կօսիս թէ մեր շկոլէքի գանձարանները լինին։

Էտ ընչեմէն է։

Զունքի չին գիդում բանի գօրութինը, հոպի մշակութինը, փէյնի արժէքը։

Մէ ֆուրգոն փէյնը աւել օքուտ է տալի քանց թու հինգ գաղէթը, վից զուզատնտիսը, օխսը վարթապիտը, ու էն էլ հայ հուղում, հայ աշխարքում։

Զէ. ողորմի ձէր մամի կողքին պառկած մեռիլներու հոքուն, գնացէք դոխտորութին սովրեցէք, իժում էկէք էստի մարթկերանց սուտ ու զուրթ դեղիր տուեցէք, խանդիսխան էլ սպանեցէք—շատ խերով բան կուլի մ՚։

Գնացէք աբլակատութին արէք, մարթկերանց գոռով շարերի մէջ գցեցէք—վիրչն էլ ձիր գլուխը օջորքեմէն կախ տուէք—կու խերվէք չէ՞։

Գնացէք ինջիրնութին արէք. միթում թէ բան էք շինում, մշակների գլխներին կաղնեցէք բդաւեցէք, ճղաւեցէք, նալերի հանգի նշաններ էլ դոշերիցդ կախեցէք—ջիրերու

ԲՆԱԿԱՐԱՆԱՑԻՆ ՀԱՐՑ

—Ա՛յ տղա, ասում ես թէ այս տունը յարմարութիւններ ունէ, բաս սա տուն է՞...

—Աղա, սրանից էլ լաւ յարմարութիւններ. հիւանդանոց հորէն էստեղ է, տէրտէր, ժամ նոյնպէս, Խօջիվանքն էլ որ շատ մօտ է—մեռնելու դէպքում մեծ խարջ չի նստի...

ԿԱՐԳԱԶՈՒՐԿ ՔԱՀԱՆԱՑ

—Փարաջէս հանել են—իսկ շքանշաններս թողել, իրաւունք ունե՞մ այսուհետև էլ այսպէս շրջելու։

ՊԵՏՐ I.

Սերբիայի թագաւորը

(շարժ.)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, 14-ին սեպտեմբերի

Մեծարգոյ խմբագիր.

Խնդրում եմ տեղ տալ «Խաթաբալայում» հետեւեալ նամակիս:

Շատերը կարծում են թէ Խաթաբալայի օրացոյցը վերջերս էլ ես եմ կազմում: Յայտնում եմ, որ միայն Փարեմուզ ստորագրութիւնը կրող օրացոյցներն են իմ կազմածները, իսկ անստորագիր կամ Աղրասիոս Արք-վարդապետ ստորագրութիւններով կրող օրացոյցները՝ իմ կազմածները չեն:

Փարեմուզ

—

Ղուրթ է:

Գասպար աղա Կալասուզով

ՕՐՒԱՅ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Բնակարան վարձողը

«Անհանգիստ և քնքոյշ հայեացք» ցաք ու ցրիւ մազերը և շարժումների անսովոր դանդաղկոտութիւնը միանգամայն բնորոշում են օրւայ հերոսին:

—Ինչպէ՞ս էք անցկացնում դուք ձեր օրերը:

—1243 կիլոմետր...

—Ի՞նչ:

—1243 կիլոմետր: Դիտմամբ ես կապել իմ ոտքերս քայլաչափ: Չկայ մի փողոց, որտեղ ես եղած չը լինեմ: 5000 անգամ միայն բարձրացել եմ 4-րդ հարկ, 2000 անգամ իջել նկուղները:

—Եւ—գտա՞ք բնակարան:

—Ո՛չ. թէև կայ մի յարմար բնակարան, բայց նա ինձ համապատասխան չէ:

—Ինչո՞ւ:

—Հասկանումէ՞ք թէ ինչո՞ւ, որովհետև 20 սենեակից բնակարանի վարձնէ 7,200 ր:

Այդպիսի վաձը մի քիչ շատ է այն մարդու համար, որը ստանում է տարեկան միան 2400 ռուբլի.

—Ձեր թանը բուրդ է:

—Ես մեծ ուրախութեամբ քաղաքից,հեռու բանտերի մօտ կապրէի, որտեղ, բնակարաններրի սենեակները քիչ են:

—Բայց դուք ներկայումս ինչ էք մտադիր անել:

—Ես կը թունաւորեմ կնոջս և երեխաներիս և ինձ էլ կը կախեմ մեր «Բնակարանային Բիւրօի» նախասենեակում, որոնք հաւատացնում են յիմարներին, որ 2,000 ազատ բնակարան կայ:

Տեսնելով նրա հետ խօսելն այլեւս անհնարին է, բարւօք համարեցի հեռանալ նրանից:

Տանտէրը

Մեր հանդէպ դուրս եկաւ մի չաղ պարոն, քնարաթախ դէմքով, խալաթի մէջ կլորւած:

Նա թարթեց աչքերն ու ասաց:

—Սիրելիս, դու ինձ ներիր, ես ամսական տաս ռուբլով պէտքէ աւելացնեմ բնակարանիդ վարձը:

--Սպասեցէք...

—Սպասելու ոչինչ չունեմ, դու կարծում ես, որ մեզ տանտէրերիս հեշտ է սպասելը: Ո՛չ, սիրելիս, դժուարէ, շատ դժուար:

—Բայց ախր մի լսէք...

—Լսել անգամ չեմ ուզում: Պետքէ աւելացնեմ, որպէսզի ձեզ նմանները, մեզ տանտէրերիցս վախ ունենան: Այնքան չեմ աւելացնի, մի՛ք վախենայ, միայն 20 ր:

—Բայց, թոյլ տւէք վիրջապէս:

—Է՜հ, ինչպէս տեսնում եմ, եղբայր, քեզ հետ ոչ մի բանում չի կարելի համաձայնուել: Չէ՞ որ ես կարող եմ, որքան քէֆս տայ, սենեակիդ վարձը աւելացնել, բայց ես չափազանց բարի մարդ եմ:

—Բայց չէ՞ որ, ես ձեր կենողը չեմ:

—Ինչ՞պէս, դուք իմ կենողը չէք, շատ տարօրինակէ: Բայց ձեզ ինչէ հարկաւոր, հարգելի պարոն:

—Ես ուզում եմ ձեզ հետ, թերթի մասին խօսել:

—Չեմ հասկանում, ինչ կայ այդ մասին խօսելու: Շատ վատ են գնում մեր գործերը: Ահագին ծախքեր ունենք, բայց եկամուտներս շատ չնչին է:

Եւ տանտէրը այնուհետև սկսեց այնքան դառն կերպով հեկեկալ, որ նրա լացը խոտերիկայի փոխւեց:

Ես կամացուկ թողի ու հեռացայ դժբախտ տանտէրից:

Դ. Կ.

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԸ ԳԱՆՁԱԿՈՒՄ

—

Կիրակի սեպտեմբերի 11-ին, տեղիս հասարակական ժողովարանի դահլիճում՝ Հայ դրամատիկ խումբը, դերասան Անդրանիկի ղեկավարութեամբ ներկայացրեց «Ջիոկոնտա»-ի, «Ոճրագործի ընտանիքը» և «Նախ մեռան յետոյ ամուսնացան» կոմեդիան:

Նախ քան պիէսայի, դերասանների մասին խօսելը, արժէ մի փոքր կանգ առնել, առհասարակ մեր թատրոն յաճախող ժողովրդի բարքերի վրայ:

Թատրոնի դահլիճը, իրենց ներկայութեամբ նախ պատում են (ազգասիրաբար) հայ թերթերի 12 բէյէնգենտները, որոնք Գանձակում գեղեցիկ գրականութեան «հրմուտ» քննադատի պատիւը են վայելում: 2, մի շարք ազգասէրներ (ազգասէրներ նշանակում է այստեղ ձրիակերներ) գլխաւորութեամբ «գրաշար-սիրացու» Իվանի, որը «Հալէյ» սրշաւոր գիստատդի երեւոյ ջնորհիւ թիւրիմացութեամբ վարժապետ է դառել: Եւ իբրև հռչակաւոր «Երաժշտագէտ» Գանձակի բոլոր համերգներին ու ներկայացումներին, ինչպէս ինքն է ասում, պարտաւոր է տոն ու ուղղութիւն տալ: Երաժշտագիտութեան մէջ նա այնքան առաջ է գնացած եղել, որ երաժշտութեան մէջ գործածւող «քառեակ» տերմինի փոխարէն մեր կար ժամանակ էշի քուռակ է գործածելիս եղել: Եւ այդ է պատճառը, որ օ. Յովհաննէսի դպրոցի «ժանկավարժների» խումբը, աշակերտութեանը քննելիս, նրան էլ, «քննիչ» ուսուցիչների շարքն է դասել, այնպիսի առարկաների համար, որոնց անունը խեղճը նոյն իսկ գրաշար եղած ժամանակը անգամ շարելու համար էլա լսած չի եղել:

Մի խօսքով դահլիճում կոնտրմարկայով ներկայ էին գտնւում, բոլորը նրանք, որոնք, մի անգամ էլա բաղդ են ունեցել դերասաններին բարեւելու:

Դերասաններից իրենց դերերը յաջող տարան պ. Անդրանիկը որը «Ոճրագործի ընտանիքի» մէջ կատարում էր Մօնսինիօրի դերը: Ծեզւիթ վանականի դերը նա այնքան յաջող կատարեց, որ եթէ խելք անի անցնի Թիւրքիա բոլոր հայերին 5 շաբաթում կաթօլիկ կըդարձնի ու, խեղճերին թէ կոտորելուց կազատի Թիւրքիայի «սահմանադրական կառավարութեան ձեռքից, և թէ ինքը Հռոմայ Պապից անմիջապէս կըկոչւի կարդինալութեան պաշտօնի և ահագին ռոճիկ կըստանայ:

Պ. Բերոյեանը Կօրադօի դերը լաւ կըխաղար, եթէ նրա խաղին հանդիսատես լինէր, ոչ թէ դատարկ դահլիճը, այլ «Елисаветпольскiи кружок»-ի կանաչ սեղաններրի շուրջը «շնթաած» երկու սեռի ինտելիգենտ համարւածները, իրենց առաջի փողերի հետ միասին: Տիկ. Ազնիւ լաւ Բօզալիա չէր, նա բեմի վրայ ցոյց տւեց, թէ սիրելու և թէ սիրւելու մէջ, ինքը շնորք և ընդունակութիւն չունի, որպիսի ընդունակութիւններով օժտւած են, ներկայիս դրեթէ բոլոր հայ տիկինները և օրիորդները...

Պ. Հայկազը Դօն Ֆերնանդօի դերում լաւ կըլինէր եթէ բեմի վրայ պարտելիս ուզունդարի չը պար գար և խօսելիս չերեւակայէր թէ եկեղեցում նորաստեղծեալ է երգում: Խորհուրդ ենք տալիս նրան, խոյս տալ առհասարակ կանացի ձեւերից, որը շատ է վնասում նրա խաղին...

Օր. Լուսիկը Էմմա-ի դերում ուղղակի աննման էր: Եթէ կեանքում էլ նման դէպքերում այդպէս միամտօրէն վարւի բանը լաւ կերթա... Իսկ Փանիեանը Դաէտանօ վանական սպասաւորի դերում,—նմանւում էր յատակիցը կպած սատանայի՝ վասն կարճահասակութեան:

Նրան էլ խորհուրդ են տալիս բօյը երկարացնելու համար աստօտները վէ՛ցը ձիգ տալ տայ:

Մոծակ



ԳՐԻՉ

(Լուն—գու—կունգ-տանից)

Մէկը, մի օր կուելով մի հարուստ մարդու հետ, սկսաւ այն ասուիճան խիստ ատել նրան, որ գնալով մի կախարդի մօտ, մեծ պատիւներ խոստացաւ նրան խնդրելով օգնել իրեն.

—Կուզէս ես չար ոգիներ ուղարկեմ, որ գիշերը խեղդեն նրան—հարցրեց կախարդը։

—Չէ. այն ժամանակ—միևնոյնէ նրա կայքը ու գոյքը կմնայ իւր ժառանգներին, իսկ ես նորից կմնամ իմ աղքատ վիճակի մէջ.

Կուզէս ես կրակի տարափ կբերեմ երկնքից, որով այրուի նրա ողջ ունեցածը-չունեցածը և ինքը միայն իւր անձը ազատէ։

—Չէ. Այն ժամանակ էլ կմնայ նրա հողը, որը չի կարող այրել ու ոչնչացնել կրակը։

—Կուզես ես ծովերից մի հոսանք կբերեմ, որը ծածկելով նրա հողերը—կանպէտքացնէ։

—Չէ. այն ժամանակ կմնայ նրա պատիւը, որը չի ջնջուիլ ոչ մի ջրով։ Ասա, ուրիշ ինչ կարող ես անել։

—Այ մարդ—ասաց կախարդը նենգաւոր ժպիտով, եթէ այդ չափ մեծ է քո ատելութիւնը, առ ուրեմն այս թանկագին իրը, սրա ոյժին ոչինչ չի կարող ընդդիմանալ։

—Տուր, տուր—ասաց անհանգիստ մարդը և ստացաւ մի փոքրիկ ծլար, որի մէջ անչափ զարմանքով տեսաւ մի սովորական գրիչ։

—Ինչ գաղտնի ոյժէ թագնուած գրչի մէջ—հարցրեց նա աւելի ևս զարմանալով.

—Օ, դու յիմար—կոչեց կախարդը—երևի դեռ չգիտես, թէ քանի-քանի մարդիկ է կործանել այս չնչին առարկայի գործածութիւնը...

Մարիկ

ՄՈԼԼԸ ՆԵՍՐԻԴԻՆԸ ՈՐՊԷՍ ԲԺԻՇԿ

Ինչպէս եղաւ մի անգամ
Ալու աչքերը խիստ ցաւեց,
Եւ դեղ ու զիր անելուց
Խեղճի ճարը կտրեց։

Ահա մի օր Ալին եկաւ,
Դտաւ գիտուն մեր մոլլին,
Եւ աղաչեց որ մեր խոջան՝
Մի դեղ անէ իր ցաւին։

—«Ես դեղ գիտեմ, ասաց մոլլան,
Դու հանգիստ կաց այ Ալի,
Առ սեւ կուպրը, դիր աչքերիդ,
Նա քո ցաւին խիստ կօգնի»։

Հիւանդն իսկոյն գնեց կուպրը,
Կապեց ցաւած աչքերին...
Բայց կուրացաւ երկու աչքով,
Հողը քաշեց իր գլխին։

Կատղած Ալին գընաց գրտաւ
Ու հայհոյեց մեր խոջին—
—«Տունդ քանդուի, ա՛յ դու մոլլա
Էս ի՞նչ բերիր իմ գլխին»։

—«Ես ի՞նչ անեմ, գոռաց մոլլան,
Կամ ինչո՞վ եմ մեղաւոր.
Աշխարհքը գիտէ, նա նենգ—կուպրը
Մի լաւ գրչի է գծուած։

Բայց ի՞նչ անեմ, որ մի ցաւի
Նա օգնում է անպայման.
Իսկ մի ուրիշ՝ ցաւի համար
Նա չի՛ դառնում մի դարման...»։

Մարսեաց

Գ-ԻՆ

(Անկեղծ յիշատակ)

Մայիսն եկաւ ու վարդ չունեմ,
Որ յիշատակ քեզ ձօնեմ—
Վարդի տեղակ մի սի՛րտ ունեմ,
Եթէ ուզես, ք'եզ կրտայի՛։

Վարդից օգուտ չե՛ս ստանայ,
Կրթատուսի ժամանակին,
Ա՛ռ քեզ սիրտս, այնտեղ վարդ կայ,
Երկար կապրէք դուք միասին...

Սեւ-աչքերիդ գերի դարձած,
Անսէր սիրտս դի՛ր ալքօմում.
Թէկուզ լինեմ կորա՞ծ-մեռա՞ծ—
Լոկ ինձ յիշիր—այս եմ խնդրո՛ւմ...

Նարգիզ

ՓԵԼԻԷՏՕՆ

ԳՈՂԻ ՆԵՄԵՍԻՍԸ ԻՐ ԸՆԿԵՐԻՆԸ ԿՕԼԼԷԳԻԱՅԻՆ

Սիրելի Օսիկ!

Երէկ ստացայ քո ուրախաբեր նամակը, որին շտապում եմ պատասխանել։ Դու լալիս ես, որ դեռ չհնչակեան, վաղաժամ թակարդ ընկար ու աքսորուեցիր հեռու—Թուրքիստանի խորերը, որ մենակ ես ու զուրկ մեր գող եղբայրների հաճելի ընկերակցութիւնից... Է՜հ, սիրելիս իմ դրութիւնն էլ մի բանի նման չէ, ես ևս ինձ մենակ եմ զգում։ Մեր լաւ ընկերներից համարեա ամենքն էլ բռնուեցին, ոմանք էլ ոստիկանների անվերջ ծեծին չդիմանալով, գնացին այնտեղ, ուր գողանալու ոչինչ չկայ։ Ներկայումս միակ ընկերս է մնացել Խօխոն, թէև նա էլ այնքան հմուտ չէ մեր գժուարին արհեստին և կրիտիկական րոպէներում կորցնում է իրան։ Օրինակ—անցեալ օրը, խուլ փողոցներից մէկում, գորգերի մի պահեստ պիտի դատարկէի. փականի գաղտնիքը վերջնականապէս գտնուած էր և ահա երեկոյեան ժամը 5-ին, սայլեր ու բեռնակիրներ վարձելով, դիմեցի դէպի պահեստը. ես ու Խօխոն զարդարուել էինք եւրոպական վերջին տարազի հագուստներով և ոտիկ հարևանութիւնը մեզանով այնքան էլ չէր հետաքրքրուում, կարծելով թէ մենք պահեստի տիրոջ գործավարներն ենք. ես կանխապէս յայտնեցի Խօխոյին իմ պայմանական նշանները և նա բեռնակիրների հետ միասին սկսաւ դատարկել պահեստանոցը ու սայլերին բարձել։ Դիմացի բնակիչներից՝ մի պառաւ դէղի հարցրեց ինձ՝—վուրթի, սկլադը դատարկում ք...

—Մաշ—ասացի ես—распродажа պիտի սարքենք.

—Էժանացնում իք հա. էտ լաւ է։

—Հա, էժանացնում ենք, մաշ.

—Էժանացրէք, էժանացրէք, վուրթի—ասաց նէ ու ներս մտաւ տուն։

Բեռնաւորուած սայլերը առաջ անցան դէպ կանխապէս որոշած տեղը, իսկ մենք աչքներս չորս արած, որտի տրօփիւնով հետեւում էինք։ Փողոցի անկիւնում պատահեց մի շտապ անցնող թաղական, որին տեսնելով Խօխոն քիչ էր մնում լեղապատառ փախչէր, բայց ես նրա թեւը պինդ հուպ տալի և Հովսեփ Ենգիբարեանի նման ասացի—Հը՞ դէղաս գիտիրէ՞ը...

Մի կողմից էլ այս կոտորուելու սոցիալիստ դրամաշորթները մեր բանը փչացնելով, դրել են մեզ ամենաանել վիճակի մէջ. այդ ֆնասակար մարդիկ մեզ նման մի քանի ռուբլիներով չեն բաւականանում, այլ հազարներ են պահանջում և դէնքերով ահաբեկում, մոռանալով Սինայի պատուիրանների 6-րդ կէտը որ ասում է. «մի սպանանիր»։ Այդ անասուածների ահից, հիմա խորամանկ հարուստները իրանց դրամարկղներում այլևս փող չեն պահում... և եթէ այսպէս շարունակի մեր բանը բուրդ կլինի։ Եթէ Աստուծով դու վերադառնաս, մենք կարող ենք մի հիմնաւոր գողութեան խումբ կազմելով, պատրաստել լաւ հրեսփոխանացուններ, հրաւիրել Ռուսաստանի յայտնի կին գողերից Женька-папиросница-ին, աչքակապ Марія Тарновская-ին և մի քանի ինտենդանտներ դասախօսելու սկսնակների հետ՝ գողութեան Фокус-ներից և երջանկայիշատակ Բախչի Իշխանեանցին՝ ուսուցանելու պլագիատն ու սատանութիւնը. կընդհանենք գրադարան, կընդարատարակենք մեր պաշտօնաթերթը... Թէ չէ մենակ ինչի նման ենք։ Ահա մի շաբաթ է—շան վիճակի մէջ եմ հիւանդ ու նօթի գլուխս տուած անդուլ հարբեցողութեան. դիտես ինչու. անցեալ շաբաթ գիշերը գրպանումս քօռ կողէկ չկար, բայց սիրտս ուզում էր մի քանի շիշ կախուրի խմելուց յետոյ, այցելել իմ հոգատար տարփուհի Ցիլիային։ Ի՞նչ անել, ի՞նչ չանել... և դուրս եկայ տանից, առաջին պատահած բակում տեսայ—ինչպէս վարագոյրը քաշ-

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(«Խաթաբալայի» սեփական գործակալ.)

—

ՊԵԱՏԻԳՈՐՍԿԻ 15-ին սեպտեմբ., հինգշ. ցերեկ. ժամի 12-ին։ Շրջակայ ամառանոցներից (Կիսլաուդ. Էսսէնտուկի, Ժելէզնաուդսկի և այլն) այստեղ ժողոված կանանց մէջ, որոնք պատրաստւում էին վերադառնալ իրենց մշտենջնաւոր ապրելու վայրերը, լուր տարածւեց, որ յայտնի խաթաբալիստ Գէօզալ Աղաբաջին երկու ժամ առաջ ճանապարհւել է դէպի Բագու։ Պարզւում է, որ «Բազի քէֆչի կանանց կոմիտէն» իր գործակալներին պատւիրած է եղել խուզարկել Գէօզալ Աղաբաջուն և ժողոված գրաւոր փաստաթղթերը և տեղեկութիւնները գրաւել, սակայն անշնորք գործակալները «Մինեբալնի» կայարանում զբաղւած են եղել ուսանողների հետ քէֆ քաշելով, որի ժամանակ Գէօզալ Աղաբաջին ծպտեալ կերպով անցել է։ Անգգոյշ գործակալները կը դատւէին զինուորական օրէնսգրի այն յօդւածով, որով ապագայում պիտի դատւեն ազգային գումարների գողերը։

Տիկ. Մարդեծեծողեանց

—

ԳՐՕԶՆԻ. 16-ին սեպ. առ. ժամի 3 ժ. 40 րոպէ։ Վլադիկաւկազից հեռագիրը գուժեց, որ Գէօզալ Աղաբաջին ծպտեալ անցել է հանքային ջրերից, ուստի Վլադիկաւկազի կանանց կոմիտէն աղերսագին խնդրում է «Գրօզնայի շէշէնասէր կանանց կոմիտէին» աճապարել խուզարկելու Գէօզալ Աղաբաջուն և գրաւել մօտը գտնւած բոլոր ձեռագիր նամակները ու գրութիւնները։

Օրիորդ Վազտուղեանց

—

ՊԵՏՐՈՎՍԿԻ, 17-ին սեպտ. առ. 8 ժամ 24 րոպէ։ Պեատիգորսկիի, Վլադիկաւկազի և Գրօզնիի կանանց միութիւնը հեռագրով կարգադրեց ձերբակալել Գէօզալ Աղաբաջուն, որին սակայն տեղոյս լեզգինկա պարող «լեզգասէր կանանց միութիւնը» անկարող եղաւ։ Այդ առիթով հեռագրւեց Դերբէնդ և Խաչմազ, ուր յոյս կայ գտնել։ Դերբէնդցի կանանց կարգադրւած է շտապ կապել Դերբէնդ կայարանից մինչև Սամուր գետը։ Քաղաքը իրարանցման մէջ է. կայարանում վառում են հազարաւոր կանայք, որոնց մէջ շատերը ամառանոցից եկած շարաւարաւոր կանայք են։ Կայարանի և նաւահանգիստի կարգը պահպանում են ժանդարմները, չորս-չորս տարբանակներով ու օրերով զինւած։

Այրի տիկ. Լոթիպարոնանց

—

ԽԱՉՄԱԶ ԿԱՅ., 17-ին սեպտ. առ. 4 ժամ 29 ր.։ Դուբեցի հայ կանայք թըրքախօս Խաչմազ և Դիլվար թըրքախօս հայ գիւղերի կանանց հետ խառը, որոնք զուտ խաթաբալիստներ են և երդուեալ պաշտպաններ «Խաթաբալա» զուտ կուսակցութեան, իրենց դրօշակներով զիմաւորեցին Գէօզալ Աղաբաջուն։ Գնացքը, որ պիտի կանգ առներ 16 րոպէ, «Խաթաբալիստ» կանանց ստիպւամբ կայարանի նաչալնիկը զիջելով կէս ժամից աւելի պահեց։

Պլատֆորմի վրայ առաջինը խօսեց տիկին Դինջդուբմպիանցօվը. նա ասաց, որ Դուբա քաղաքի և երկու հայ գիւղերի բազմաթիւ կանայք մի սիրտ և միհոգի դառած՝ ողջունում են Գէօզալ Աղաբաջու մուտքը Դուբայի սահմաններում ու ցանկանում են, որ իրենց մայրաքաղաք Դուբայում երկու օր մնայ։ Ապա աղ և հաց ներկայացնելով Գէօզալ Աղաբաջուն խնդրեցին մի փոքր հանգստանալ նասիլէիկի սենեակում։ Գէօզալ Աղաբաջին, ըստ երևոյթին խիստ քաղցած լինելով, ուտեցին մի պատուհանի տակ թշշում էր հիշատակը։ Կատարեալ հանգստութեամբ ներս մտայ, նայեցի վարագոյրի փոքրիկ պատուհանից և ինչ տեսնեմ—զեղեցկուհի տանտիկինը իրենց դռնապանի հետ գրկւած պաչպչւում է։

—Աղջի թորդ... ասում էր մշեցի դռնապանը—էրիկդ վրայ կուգայ...

—Չէ—ասում էր տիկինը—նա գնաց խորոված բաղրիջան ու դմակ գնելու. շուկան հեռու է, կաց թէյ խմիր, Հագօ ջան և...

—Հա, հօրս ցաւը կըխմի... թու քո նամուսին—մամտացի ես ու թշշող տաք-տաք հեշտաւոր վերցնելով ծլկւեցի, բայց դեռ իմ ծանօթ գինետանը չհասած, երկու կարմրաքիթ թաղականներ բռնեցին օձիքս և տուր թէ կտաս... Ոստիկանատուն տանելիս—իմ շնորքը հօ գիտես, հեշտաւոր դէպի մայթը շպրտեցի որը ճայթեց ռումբի նման և դուրս պրծնելով խիստ յաջող կերպով փախ տուի ու կողքերս ջարդած մի կերպ տուն հասայ։ Բայց, ա՜խ ափսոս իմ ոսկեփայլ հեշտաւոր։

Հետևեալ օրը կիրակի է. գնացի Երևանեան հրապարակը, լրագիր գողանալու ու կարդալու այդ դէպքի մասին (գիտէք որ լրագիրները ինչ պարապ բան ուզես գրում են)։ Կամացուկ յետևից մօտեցաւ մի հիւանդոտ ցրուիչի, որ ուշաթափւածի նման ընեխը բաց աղաղակում էր—«կզեթ, կըզեթ...» և մատերիս պատահած առաջին թերթը դուրս քաշեցի թեւի տակից ու շտապեցի Ալէքսանդրեան այգին կարդալու և միևնոյն ժամանակ սպասելու Խոխոյին, թէև ափսոս որ հանածս «Հովիտ»—էր, որի մէջ չկար իմ սիրագործութեան լուրը։ Էհ—ասի—հերիք է ինչ գողութեան մասին մըտածելով ուղեղս յոգնեցրի, արի քիչ էլ կարգամ գուցէ խելքս շատանայ և նստելով մի ծառի հովանու տակ, սկսայ կարդալ—«...համշարիների պրոֆեսոր, Զիբիլ, подлецъ, լիրը, թեթևսօլիկ, տուտուց... այս բառերը «Հովիտի» մէջ հայհոյանք չէ.» Հապա ինչ է—ասի—օրհնանք է, լաւ օրհնանք է. գնացէք. կորէք տօ ինձնից բեթարներ... ճխտելով այդ յիշոցաթերթը, անցնող կոլբասնիկի բաշխեցի։

Շատ չանցած Խոխոն (որ շատ ճշտապահ ու ազնիւ գող է և միևնոյն ժամանակ կարդալու ջերմ սիրահար) ներկայացաւ ըստ ժամադրութեան, ձեռքում բռնած օրւան լրագիրը, որը սկսանք վայր ի վերոյ կարդալ, թէև խելքներս բան չէր մտնում, որովհետև գրւած էր հայերէն տառերով, բայց հայերէնի հոտ չուներ—ահա օրինակ՝

«Կաթողիկոսիզմ—ահա մի կարդինալ հարց. մօտենում են ընտրութեան օրերը և մենք չպիտի սուոյիկեան անտարբերութեամբ, որպէս այլ էնտրանզիժան էլեմենտները հեռու մնանք կոնկրետ խնդիրներից ու սկեպտիկ լռութեամբ տեղի տանք քամելիոնային ֆիսկոյին։ Մենք իբրև միաժամանակ օպպոզիցիոնիստներ, մեր ազգի բէալ շահերը պիտի դարձնենք մեր լէյտմոտիւ. այդ է պահանջում գրական էտիկան, մեր գործի էվոլիւցիան։ Զիսօսելով այլ և այլ թերթերի աննօրմալ անտագոնիզմի մասին, որոնց հեղինակ պուբլիցիստները հանդիսանում են սոսկ ֆիգուրանտներ համազգային խոշոր ակտերի մէջ, մենք առաջարկում ենք մեր թեկնածուի անունը—դոկտոր ֆիլոլոգ, անտրոպոլոգ, ֆեմինիստ և մագիստր ֆարմացիի՝ բարամ եպիսկոպոս Զարբազանեան։ Այս բարձրաստիճան սանսօվնիկը իբրև մոտենտի գիգանտ օպտիմիստը, միշտ հակառակ է սինքոբներին և պրոգրեսն է նրա կրեդոն ու դևիզը, արդարադատութիւնն է նրա հաւատի սիմվոլը...»

Հէնց այս մտքերներէնը կարդալու միջոցին, վրայ հասաւ մեր ծանօթ վաճառական Վարազեանը, որ միշտ 80—90 տոկոսով սեպհականացնում էր մեր գողացած ապրանքները, խրախուսելով և գովելով մեր եռանդն ու յանդգնութիւնը. նա իր հարբս-

լով ագ ու հացը կուշտ ուտելուց յետոյ, Սամուրի Ջրից մի վեդրօ խմեց: Այնուհետև դառնալով իրեն դիմաւորող կանանց, հետևեալ խօսքերն ասաց.

«Այ քաղցրիկ քոյրեր, ախչիգ-ներ և բալաներ. Թուրքը անօ-րէն ա, համմա խօսքը օրհնուոր ա, Թուրքի մեասալան ասըմ ա՝ «ջան ջան ուչուն եանար, համ-մա եաղըն հճրասի եանար...» Աս օր ինձ հետի մի պատիկ ա, ասօր ես կարծաս նոր ամ ծըն-ւալ, աս օր ես իմ բալաներիս առաջին արևէյին կաննած ամ, ես խաԹաբալիստների Թաքու-հին, տիւք ալ Քեասպար Կալա-տուզովի բաջիները. Թող Աստո-ծը ծեզ ալ սաղ սալամաԹ պահի, Քեասպարի ալ բայեաղը զօռ, որ դիւշմանի Թօփը քեար չի անի...

—Հուռա՜յ, հուռա՜յ, սուրփ ա-ւետարան քջօմագ էլասուն Քեաս-պարի.—ասեցին խաչմաղեցի կա-նայք,

—Ամի, ամի, սուրփ լուսաւո-րիչ գիւզ վեարսուն Քեասպարա:

—Ամէն, ամմէն, Աստուած ան-պակաս անէ Քեասպար Կալատու-զովին մեր անտէր գլխից:

Գնացքը ճանապարհեց շոգէ-մեքենայի ուրախ սլլոցի տակ, ժամի ուղիղ 5-ին առ.:

Օրիորդ Փափազեանց

ԲԱԳՈՒ, 19-ին սեպտ. առ. 9 ժամ. 18 րոպ. Հեռագրում եմ կայարանի հեռա-գրատնից. կայարանից մինչև պարապետ հրապարակը լցւած է կանանցով և օրիորդներով: Քաղաքապետ Մարտինով ստիպ-ւած է անձամբ կարգը պահպա-նելու վրայ հսկել:

Գէօզալ Աղաբաջու մուտքն է հանքային ջրերից: Հաջի Զէյնալ Աբդուլ Թաղիեւը, որի ծախքով է ճանապարհորդել, ուղարկել է իր աֆտոմօբիլը: Կանայք երկու կուսակցութեան են բաժանւած. մի մասը, որը հնար չէ ունեցել աֆտոմօբիլ գնալու, դրօշակ-ներով ցնծագին ընդունեցին Գէօզալ Աղաբաջուն, իսկ բէֆչի կանայք՝ սև դրօշակներով զին-ւած սկսեցին շւացնել:

Այնուամենայնիւ Գէօզալ Ա-ղաբաջին Պեատիգորսկուց բերած փասսաԹղԹերը, որոնք վերաբե-րում են կանանց կենցաղին, կրծքի վրայ ամրացրած գիմեց իր բնակարանը:

Հասարակութիւնը, մանաւանդ ամառանոց գնացած կանանց ա-մուսինները՝ անհամբերութեամբ սպասում են «ԽաԹաբալային», ուր պիտի տպագրւած լինի ի-րենց կանանց գաղտնիքները:

Տամախու առաջնորդը և նա-խանդամ Տէր-Մակար Պոմբեան-ցը անհանդիստ են յառաջ գալիք բազմաԹիւ [illegible] ների առԹիւ:

Տիկին Անապատեանց

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Կիրակի սեպտեմբերի 11-ին Հայոց Դրա-մատիքական ընկերութեան Թատերասէրնե-րի խումբը մասնակցութեամբ գերասաննե-րի ներկայացրեց Զուդերմանի «Պատիւ» կոմեդիան 4 գործողութեամբ:

Նախ քան ներկայացման սկսելը մենք մի փոքր շրջագայեցինք Թատրոնի նախագա-ւիթներում:

Բաւականին մեծ հասարակութիւն էր խռնւած, որոնց մէջ աչքի էին ընկնում Յովնանեան դպրոցի աշակերտուհիները՝ ի-րաքանչիւր Ներսիսեան դպրոցի երեքական աշակերտների հետ, որոնք եկել էին նրանց անտրակտներում զբաղեցնելու և գիշերը ճանապարհ ձգելու համար:

Րոպէ առ րոպէ գեղեցիկ սեռը մօտենում էր հայելիներին և բանոնզովի կօսէն ուղ-ղում, կամ Թէ քրտինքի հետ ծորած երեսի պուդրին մետաքսի Թաշկինակով հարԹում և ապա աչքերը չորս կողմ չռած, բոժոժից նոր դուրս եկած շերամի նման Թրպրտում մի արու ճարելու համար:

Իսկ արուներից շատերն էլ մուԹ ան-կիւնները քաշւած, ծածուկ հանում էին փոքրիկ հայելիները, դեմքերին նայում և եթէ բեխի մէկը դաւաճանած էր լինում և

տութիւնը գիզել էր մեր շնորհի. այդ գի-տակ գողութեան անհերեոյթ Աստուածը, գի-տէիք մենք ամենքս, բայց ինքը չէր ու-զում գիտենալ:

—Ի՞նչ հետաքրքիր է գողին լրագիրը... դիմեց նա ինձ մի սուր հեգնանքով: Այդ խօսքերից արդէն ես խիստ կատաղեցի, դու գիտես որ գողի սիրտը դողալով հանդերձ՝ խիստ զգայուն է:

—Այո—ասացի—ես գող եմ և եթէ գող չլինէի—ուրեմն ինչ պիտի լինէի. քեզ նը-ման մարդ, բայց մի՞թէ դու գող չես. ես մահն աչքիս տակ առած գողանում եմ տա-ժանելի դժւարութեամբ, իսկ դու գողանում ես հանգիստ նստած քո բազմոցի մէջ, ես գողանում եմ սովամահ չլինելու, իսկ դու առնում ես հարստանալու և ճարպոտելու համար... բայց գուցէ ես էլ լաւ մարդ լի-նէի, եթէ մանկութիւնից ինձ էլ դաստիա-րակէին ինչպէս հարկն է, ով էր իմ ուսու-ցիչը, իմ խնամակալը, իմ տէրը... Նորից քեզ նման գողեր, անսիրտ գողեր, սառոյցի կտորներ, ով իմ գողութեան առաջին օ-րերում յուշեց ապագայի արհաւիրքը... ոչ ոք: Գող... բայց մեր ժամանակներում ով չէ գող, կամ ով կարող է ապրել այս հոգեմաշ պայմաններում, եթէ գողութիւնը չլինի: Ամենքը գողանում են, գողանում են ու չեն ապաշաւում, գողանում են և գողի անուն չեն կրում: Մէկը՝ մարդ է գողա-նում, երկրորդը՝ տուն, դրամ, երրորդը՝ հոգի, հաւատ ու պատիւ, շատերն էլ գո-ղանում են կենդանի կինը իր ամուսնուց... Բայց նորից նրանք համարւում են՝ մեծա-պատիւ պարոններ...

—Ա՜յ տղայ ինչ ես ճառում, ես կատակ արի... շեշտեց Վարդանեանը ու կասկածոտ հայեացքներով խուսափեց մեզանից:

Գիտե՞ս Սոփի—առաջ ես ինքս էլ ինձ ա-սում էի գող, փուչ, ցինիկ ու չէի վրդով-ւում, որովհետև աշխարհից շատ քիչ բան գիտէի. ես կարծում էի Թէ նրանք—որոնք միշտ խօսում են բարու, գեղեցիկի, սիրոյ ու կատարելութեան անունից... Նրանք մի-մի երկրային աստւածներ են, բայց վերջերս ես խորը մտածելով, տեսնում եմ որ հա-մեմատած նրանց հետ, ես շատ չնչին, փոք-րիկ ու հասարակ գող եմ... Ա՜խ եթէ այս ուշ ապաշաւի րոպէներին մէկը կարողա-նար հասկանալ իմ ցաւած սիրտը, կարո-ղանար կարեկցել ինձ ու մի ազատ գործի մէջ դնէր—ես այնպէս կըյեղափոխէի դէպի հաւատարմութիւնն ու ազնիւ աշխատանքը... Բայց ո՛չ, երազ է այդ, ես կասկածելի եմ ամենքի համար, աւելորդ վնասակար ու անդարձ փչացած. ինձ համար տեղ չկայ, ապաբէգ չկայ և ոչ մի ըմբոստ միտք չի կարող իրաւացի համարել գողի զղջումը և ընդունել նրան—իբրև մաքուր ու վերածն-ւած մի մարդ:

Է՜հ, բայց Թողնենք այդ բոլորը:

Հէնց երէկ լրացաւ իմ ծննդեան 40-ա-մեակը: 40 տարի, լի արհաւիրքներով, սարսափներով ու հսկայական յանդգնու-Թեամբ, այդ 40 տարուց 28 տարի անցրել եմ այլ և այլ բանտերում, իբրև տէրութեան անառակ զաւակը, կալանաւորի գորշ ու գե-ղեցիկ համազգեստի մէջ, իսկ 12 ողորմելի տարի ազատութեան մէջ չար ոստիկանների անվերջ ու անխնայ ծեծի տակ և այս ներ-կայ օրերը իմ փոԹորկալի կեանքի ասկու-ները միայն համարելով, ուզում եմ հան-գստանալ, ուզում եմ հեռո՜ւ հեռո՜ւ փախ-չել աշխարհիկ կեանքի ժխորից... ինչ Թագ-ցնեմ բարեկամս, ես վճռել եմ գնալ որևէ մի մենաստանում ճգնելու:

—Բարև Սօսս, գուցէ յաւիտեան:

Սակայն... տղերս գրկիս, դիմացս—հա-րեանուհուս պատուհանի առաջ մի այնպիսի հասա արծաԹէ բաժակակալ եմ տեսնում... և ներսն էլ մարդ չի երևում... ա՜խ, եթէ ճգնելու չլինէի, կարող էի խիստ հեշտու-Թեամբ Թացնել:

Ափսոս:

Մարկ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԿՐԱԳՆԴԻ ՔԱՐՏԵԶԸ

—Լսեցէք, սիրելիք, երկրագունդը երկու մասերից է բաղկացած՝ արևմտեան և արևելեան. արևելեանում է գտնուում Եւրոպան, Եւրոպայումն է գտնուում Գերմանիան— իսկ Գերմանիայում՝ ահա այստեղ գտնուում է մայրաքաղաք Բերլինը—որտեղ գտընում է և մեր կայսր՝ Վիլհելմ Ա-ը։

Աշնանը այգում

—Տիկին, ինչի էք դուք ձեր երեխաներին խընձորենու տակ՝ հողի վրայ նստեցնում և լացեցնում։

—Ուզում եմ, որ որդիքս էլ Նիւտոնի նման հանճարեղներ լինեն։



—Ա՛յ դու անպիտան, ինչի ես ուշանում, ամբողջ օրերով տուն չես գալիս։

—Մայրիկ, հապա ինչ անեմ, սիրահարած եմ. մեր հարևանի տիկինը այնչափ գեղեցիկ է, որ օր ու գիշեր նրան եմ ուզում նայել։

ուղղութիւնը փոխած, իսկոյն հոտաւէտ ֆիքսատուրան պինդ-պինդ քսում էին և սրում դէպի վեր, յետ կամ առաջ, նայած թէ՝ բեխը կապը կտրած կնկայ նման ինչ ուղղութեամբ աւելի էր հնազանդւում իր տիրոջը։

Դրանց գործողութիւնները չխանգարելու համար, անցայ դահլիճի մուտքի կողմը և պատերին կարդացի խոշոր տառերով մի քանի տեղ գրած «здѣсь курить строго воспрещается». մինչդեռ թատրոնի հատուկ կառավարիչը սիգարը պինդ սեղմած ցուցա-միջամատով, ծխում էր և զբօսնում այդ յայտարարութեան առաջով։

Վերջապէս զանգը տւեցին և արուն իր բեխը մոռացած, էգը հայելին թողած, կառավարիչը սիգարը վերջացրած, իսկ ես էլ դրանցից ազատւած՝ մտանք դահլիճ։

Չնայած որ ներկայացնողները պատւաւոր դերասաններ էին, բայց և այնպէս «Պատիւ» պիէսայի առաջին գործողութիւնը այնքան էլ պատւով չանցաւ, ինչպէս պատւով չանցաւ նաև գալէրէյում պատրաստ կանգնած ու զակազ տւած արշին ու կէսանոցների ծափահարութիւնները։

Ուրիշ բան էր 3-րդ և 4-րդ գործողութիւնը. այդտեղ արդէն բոլորն էլ լաւ տարան իրանց դերերը, բացի մի երկուսից։

Ռօբերտի դերը կատարում էր պ. Ամօ-Խարազեանը։ Վերջին գործողութեան մէջ ինձ ուրախացրեց մանաւանդ այն հանգամանքը, որ կոմս Զաարերգը (Ստեփանեան) բեմի վրայ նրան տւեց 40,000-ի չէկ. գոնէ դրանով հնարաւորութիւն կունենայ Ամօ-Խարազեանը ծածկելու Հալլաբարի թատրոնի դեֆեցիտները։

Որքան գովելի է պ. Ստեփանեանի այդ բարեգործութիւնը, նոյնքան գովելի է և նրա խաղը բեմի վրայ։

Պ. Գաւրօշը (գործարանատէր Միլլինգ) և Աւետեանը (հայր Հէյնիկէ) իրար հակապատկեր էին ներկայացնում։ Առաջնի դէմքից այնպէս էր ձէթ թափւում, կարծես թէ պ. Ստեփանեանը 40,000-ը նրա հաշիւից լիլէր տալիս, իսկ պ. Աւետեանը դէմքի հասարակ շարժումով էլ ծիծաղ էր պատճառում հասարակութեան։

Մնացած դերակատարներն էլ բացի մի երկուսից լաւ տարան իրենց դերերը։

Փարիմուզ

ՓԱԼԻՍՈՓԱՅԻ ՕՐԵԳԻՐՔ

Մեր գլուխը շինւած է շուռ տւած ամանի նման՝ ներքին մասը դէպի վեր, իսկ բերանով դէպի ցած։ Այդ պատճառով էլ զարմանալու չի, որ մեր բոլոր գործերը գլխիվայր են դուրս գալի։

—

Մի յայտնի փիլիսոփա հաւատացնում էր, որ եթէ սիրահարութեամբ ամուսնացողները ամուսնանային ոստիկանութեան նըշանակութեամբ, ընտանեկան բաղդաւորութիւնը առաւել մեծ կըլինէր։

—

Պաշտօնիայի և պարահանդէսում պարող կնոջ միջև եղած զանազանութիւնն այն է, որ պարուհու ոտքերն են խիստ զարգացած, իսկ պաշտօնիայի—ձեռքերը։

Դեկամ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՐՍԻԱԾ Է յունիսի 19—20-ին

ՄԻ ՁԵՌԱԳԻՐ ԲՐՕՇԻՒՐ

ՄԱՐԻԿ

«ՆԱՄԱԿՆԵՐ ԱՌ ԼԻԱՆ»

Գանողին խնդրում են թողնել «Խաթաբալա»-ի խմբագրատունը, գոհացուցիչ վարձատրութեամբ։ 10—8

МАГАЗИНЪ КОМПОЗИЦІЯ

Тифлисъ, Пушкинскіи пассажъ № 8

громадная экономія шведскаго композиціон. бѣлья Носится не менѣе двухъ лѣтъ

Постоянный большой выборъ свѣжаго товара ВОРОТНИКОВЪ, МАНИШЕКЪ И МАНЖЕТЪ По фабричнымъ цѣнамъ

Передѣлка въ любой фасонъ безплатно

Продаются портняжныя принадлежности, как-то пугоицы, подкладки, мѣлъ и впрочѣе.

ИНѢЕТТЯ ТУТЪ-ЖЕ ГАЛАНТЕРЕЙНЫЙ ОТДѢЛЪ

Остерегайтесъ поддѣлокъ и подражаній

Просимъ обратится только Пушкинскій пассажъ № 8

15—3 (о. и.) М. А. КАЛТАКЯНЪ

ՌԱՍՏԱՏԵՐ ՕԲՕՒ

Նորագոյն նկարներով հսկայական քանակով

ՍՏԱՑԻԱԾ Է

Ե. Յ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

ԴԷՊՕՅՈՒՄ

որտեղ և վաճառւում է գործարանային գներով։

Թիֆլիս Դվորցովաեա փողոց։ 50—36

ԱՐՇԱԿ ՄԱԼԵԱՆՑԻ

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԶԳԵՍՏՆԵՐԻ

ԱՐՀԵՍՏԱՆՈՑԸ

Գանովսկայա փողոցից ՏԷՐ-ԱԶԱՐԵԱՆՑ Երևանեան հրապարակ, Խարազեանի տուն՝ «Кавказъ» թերթի նախկին խմբագրատունը—Առաջին Փոխադ. Վարկի Ընկ. կից։

Արհեստանոցում ընդունւում են պատւէրներ տղամարդկանց աւելի աճաշակաւոր զգեստներ կարելու ռուսական և արտասահմանեան ապրանքներից,

Որոնք ստացւում են շաբթէ-շաբաթ՝ և անմիջապէս։

ԴՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ 0—4

ԵՐԵՎԱՆԻ ՊՈՊԱՐԱՆ

ԲԻՍՏՈՐԱՆ-ՃԱՇԱՐԱՆ

„ԴԻԼԻ ՊՈՒՋՈՒՐ“

Քաղաքի կենտրոնում, ամենայարմար տեղ Թամամշեան քարվանսարայի տակ

ՄԻՇՏ ԹԱՐՄ ՄԹԵՐՔԻՑ

— Եւրոպական եւ ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Ընտիր ըմպելիներ, զով կաբինետ-սենեակներ մաքուր խոհանոց ու պատրաստակամ ծառաներ

25—21

Первокл. ресторанъ „АННОНА“

„Зданіе Артистическаго Общества“

Сод. Я. Т Бондаренко Ежедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час. до 2-хъ час. ночи. **играетъ вновь приглаш. итальянскій струнный оркестръ, съ пѣніемъ,** г-жи Сакко и Марія Оландезе и баритона Дж участіемъ ндезе, подъ управленіемъ САККО.

ЗАВТРАКИ, отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2 час. до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдъ—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская; билліарды. Имѣются кабинеты. отъ жары можно спасаться только въ

„АННОНѢ“

52—21

Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառւում է

ՆԱՐ-ԴՈՍ

ՊԱՅՔԱՐ

Վ. Է. Պ

Դինն է 75 կոպէկ

Գլխաւոր պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում, ուր և դիմում են գումարով գնողները։

10—1

40 օր! ԶՐԻ!

Եթէ դուք 40 օրուայ ընթացքում չէք սովորի ազատ խօսել, կարդալ և գրել գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն և լատիներէն նորագոյն մեթոդով կազմած մեր ձեռնարկներով (ուրիշները բեկլամ են),

ՓՈՂԸ ՑԵՏ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ

սոր ձեռնարկի գինը ճանապարհածախսով վերագիր վճարով արժէ 1 ր. 10 պ., երկուսը—1 ր. 90 կ., երեքը—Մ 2 ր. 80 կ., չորսը—3 ր. 65 կ։ Պատուէրները կատարում է միակ պահեստը ամբողջ Ռուսաստանի համար։ С. Петербургъ, Петербургск. сторона Большой пр. № 56—609, Я. К. Петерсъ. 482 00—20

Ի-ԻՆ ԽՈՀԱՐԱՐԱԿԱՆ

ԿՈՒՐՍԵՐ

Լիակատար կուրս լեկցիաներ «ՊԱՍԻԱՑ ԵՒ ՈՒՏԻՍԻԱՑ ՃԱՇԻ» ինքնուսուցման համար. մօտ 1000 բէցէպտ կերակուրների, խմիչքների, թխուածքների, կոմպոտի, մուրաբաների քաղցրեղէնների և կարկանդակների և այլն։ 300 երես խիտ տպագրած, գինը ճանապարհածախսով վերադիր վճարով 2ր 60 կ.։ Ցուցմունքներ ինչպէս կանոնաւոր կերպով տանել տնային տնտեսութիւնը և պատրաստել տնային հաւեղ ու սննդարար ճաշ, միսը կոտորելու և սեղանը զարդարելու մասին յաւելուածով, մօտ 100 երես, նկարներով։ Գինը 1 ռ. 20 կ., երկու գիրքը միասին 3 ռ. 35 կ. (կարելի է մարկաներով). պահանջներով դիմել բացառապէս Я. бургск. рсу, С.-Петербургъ, Петер-К. Петесторона, Большой просп. № 56—609, 483 0—20 (ե. հ. շ.)

ԲՈԼՈՐՈՎԻՆ

!! ԶՐԿԱՆ ԱՑԼԵՒՍ ՀԻՒԱՆԴՆԵՐ !!

Եթէ Դուք հիւանդ էք սֆիլիսով, տրիպէրով, շանկերով, սեռական թուլութեամբ, կամ Ձեր առողջութիւնը քայքայած է օնանականութեամբ—պահանջեցէք «Հանրամատչելի բժշկարան գաղտնի հիւանդութիւնների տղամարդու, կանանց միզասեռական օրգաններին», նկարներով և բազմաթիւ բէցէպտներով մօտ 250 երես։ Գինը ճանապարհածախսով ու վերադիր վճարով 1 ր. 30 կոպ.։ «Ժողովրդական բժշկարան-ձեռնարկ», չափահասների և ամեն տեսակ հիւանդութիւններ բժշկելու համար, բացի գաղտնի հիւանդութիւններից, առանց բժշկի օգնութեան մօտ 400 երես. գինը ճանապարհած. վերադիր վճարով 1 ր. 40 կոպ.։ Երկու գիրքը միասին 2 ր. 50 կոպ. (կարելի է մարկաներով)։ Միակ պահեստը С.-Петербургъ, Петербург. сторона, Большой просп. № 56—609 Я. К Петерсъ 484 (ե. հ. շ.) 0—20

Типографія «Культура» Баронская 14. Խմբ.-հրատարակիչ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

—Լիզի՛կ, վերադառնանք շուտով տուն, կարող են սաւազակները յարձակուել եւ մեզ կրգերեն եւ կամ... անպատուութիւն։

—Ի՜հ, Լուսիկ, զուր ես վախում. երանի թէ այդպիսի բախտի արժանանանք. մեր երիտասարդները շնորք չունեն մեզ գերելու—լաւ է՝ եթէ սաւազակները գոնէ յափշտակէին. ժամանակ չէ՞ արդէն սանին մօտենում ենք, այն ինչ տատս 14 տարեկան է ամուսնացել։